և ազգութեամբ երգուեցաւ ըստ ցանկութեան Վեհափառ Կաթուղիկոսին և յայտնի «Боже, Царя Храни!» մաղթանքն։ Երգերից վերջը Նորին Վեհափառութիւնն հարցրեց կառավարչուհուն, թէ հայ աշակերտուհիք կարո՞ղ են արդեօք հայերէն լեզուով երգել ինչ և է երգ. տիկին Լիւտերն պատասխանեց, թէ այժմ չեն կարող, բայց եթէ մի այլ անգամ ինքն բաղդ ունենայ ընդունել Վեհափառ Հօրն գիմնազիայում, անշուշտ յառաջագոյն կը հոգայ, որ կարողանան երգել։

Այսպէս կէս ժամու չափ գիմնազիայում մնալուց յետոյ՝ Նորին Օծութիւնն կրկին անգամ օրհնեց բոլոր ներկայ եղողներին, գիմնազիայի հոգատարին, ու շնորհակալութիւն յայտնելով վերատեսուչ պ. Կամենսկուն և կառավարչուհի տիկին Լիւտերին՝ բարեհաճեցաւ մեկնել՝ ախորժական տպաւորութիւններ թողլով ամենքի վրայ։

Երեքշաբթի առաւօտեան Նորին Օծութիւնը այցելեց գերեզմանատունն, եկեղեցական դասի հետ՝ օրհնելու իւր հօրեղբօր Կարապետ վարդապետ Տէր Գրիգորեանի գերեզմանը։

Այս տեղ Վեհափառ Հայրապետը զգացուած ասաց, որ եկեղեցականները պէտք է մոռանան իրանց անձը գործի սրբութեան համար, ինչպէս հանգուցեալն, որ խօլերայի ժամանակ եկել էր Բագու անհովիւ հօտը մխիթարելու և ինքն էլ զոհ գնացել իւր պարտաճանաչութեան 1829 թուին[1])։

Գերեզմանատնից վերադառնալով՝ Նորին Վեհափառութիւնն առաւօտեան 9 ½ ժամին իւր ուղեկից բոլոր եպիսկոպոսների հետ բարեհաճեցաւ այցելել Հայոց եկեղեցական ծխական երկդասեան ուսումնարաններն, որոնք գտնվում են Ս. Լուսաւորիչ եկեղեցու բակում։

Այս տեղ Նորին Վեհափառութեանն դիմաւորեցին մեր ուսումնարանաց հոգաբարձուներն, Մարդաս. Ընկ. խորհրդոյ անդամներն և ուսուցչական խումբը տեսչի հետ միասին։ Նորին Վեհափառութիւնը հաճեցաւ մտնել օրիորդաց ուսումնարանի դահլիճը, որ ըստ կարելոյն վայելուչ զարդարուած էր. դահլիճի

---

[1])Կարապետ վարդապետի տապանագիրը կարդա գրքիս 397 երեսում։